

# ԱՇԽԱՐՀԸ ՀԱՅԵՐԵՆՈՎ

---

ԱՐԴԻ ԸՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԱՐՁԱԿ

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, 2016  
ԲՈՒՆՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:



ԶԱՆԳԱԿ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

MELINDA NADJ ABONJI

*Tauben  
fliegen auf*  
*Roman*

Aus dem Deutschen übersetzt  
von Gayane Ginoyan

JEREWAN – 2016

ՄԵԼԻՆԴԱ ՆԱԴՅ ԱԲՈՆԻ

# Աղավնիները թռչում են

Վեպ

Գերմաներենից թարգմանեց  
Գայանե Գինոյանը

ԵՐԵՎԱՆ – 2016

ՀՏԴ 821.112.2(494)–31Նաղյ Արոնի  
ԳՄԴ 84(4Շվեյց)–44  
Ն 146

Die Übersetzung dieses Buches wurde durch Pro Helvetia, Schweizer Kulturstiftung gefördert. Des Weiteren wurde die Übersetzung durch das Arbeitsstipendium der Robert Bosch Stiftung, NRW–Aufenthaltsstipendium und EÜK Straelen gefördert.

Նաղյ Արոնի Մելինդա  
Ն 146 Աղավնիները թռչում են: Վեպ / Մելինդա, Նաղյ Արոնի: Գերմաներենից թարգմանեց Գ. Գինոյանը:— Եր.: «Զանգակ» հրատ., 2016.— 332 էջ.— (Աշխարհը հայերենով. արդի շվեյցարական արձակ):

*Վեպը Կոչիշ ընտանիքի մասին է, որը Հարավսլավիայում հունգարական փոքրամասնություն է կազմում և արտագաղթում է Շվեյցարիա: Իրենց օրինակելի վարքի և աշխատասիրության շնորհիվ նրանք քաղաքացիություն են ստանում և բավական եկամտաբեր սրճարան են աշխատեցնում: Դուստրերը՝ Իլդիկոն և Նովին, մեծանում են երկու մշակույթների միջև, հրապուրվում մեկ Կոլվորինայում կորցրած հայրենիքով, մեկ շվեյցարական հասարակության մաս կազմելու ցանկությամբ: Երկար ժամանակ է անցնում, մինչև Իլդիկոն հասկանում է, որ շվեյցարական անվտոմ, իդեալական կյանքի հետևում պարզորոշ թշնամանք կա օտարների հանդեպ: Մելինդա Նաղյ Արոնին գրավիչ և զգացմունքային պատմում է, թե ինչ դժվարությունների հետ է կապված ինտեգրացիան:*

ՀՏԴ 821.112.2(494)–31Նաղյ Արոնի  
ԳՄԴ 84(4Շվեյց)–44

ISBN 978–9939–68–493–2

© 2010 Jung und Jung Verlag GmbH, Salzburg und Wien  
© «Զանգակ–97» ՍՊԸ (հայերեն հրատ.), 2016  
Zangak–97 LLC (Armenian edition), 2016  
© Գայանե Գինոյան (թարգմ. համար), 2016  
Gayane Ginoyan (für die Übersetzung), 2016  
Photo of Melinda Nadj Abonji by © Gaëtan Bally

## ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տիտոյի ամառը.....	7
Կոչիշների ընտանիքը.....	49
Սահմանապահ ոստիկաններ, լացող ուռիներ .....	74
Բառեր, ինչպես... ..	93
Երկնային.....	120
Աշխարհներ .....	142
Յուլի.....	174
Դալիբոր.....	191
Մենք.....	212
Real big .....	231
Մամիկան և պապուցին.....	259
Սերը: Օովը: Գետը.....	276
Ձեռքերը օդում.....	293
Նոյեմբեր .....	316

ՀԱՅԵՐԵՆ ՀԻՄՆԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀԻՄՆԱՐԱԿՈՒԹՅԱՆ, 2016  
ԲՈՒՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

## Տիտոյի ամառը

Երբ մեր ամերիկյան մուգ շագանակագույն, ավելի ճիշտ, շոկոլադավուն «Շերոլետով» վերջապես մտանք քաղաք, արևն իր ճառագայթներն անգթորեն ուղղել էր գյուղաքաղաքին և համարյա անմնացորդ կլանել տների ու ծառերի ստվերները: Մենք քաղաք մտանք վեստրին և շարունակ պարանոցներս ձգում էինք՝ տեսնելու, թե տեղն էր դեռ ամեն բան, և արդյոք ամեն ինչ անցյալ ամառվա նման էր, կամ էլ՝ ինչպես ամառվանից առաջ. մենք ամեն տարի այնտեղ էինք գնում:

Մենք սլանում ենք բարձրուղեշ բարդիներով եզերված փողոցով՝ ծառուղիով, որը գյուղաքաղաքի մուտքն է ազդարարում: Ես երբեք ոչ ոքի չեմ ասել, որ երկինք ձգվող այդ ծառերն ինձ՝ մոտ գլխապտույտ են առաջացնում՝ նման այն վիճակին, որ զգում եմ Մատեոյի հետ (գլխապտույտն առաջանում է, երբ ես ու Մատեոն պտտվում ենք գյուղին մոտիկ անտառի ամենագեղեցիկ բացատում, մտերիմ, ճակատ ճակատի, յուրահատուկ սառնությամբ լեզուն լեզվին: Նա սև մազեր ունի, որ կարծես անմնացորդ նվիրվել են մաշկին ու նրա պայծառ և ճերմակ գեղեցկությունն ավելի են ընդգծում):

Երբ անցնում ենք բարդիների կողքով, այդ շողքն ինձ խելքահան է անում: Մեր շոկոլադավուն նավն անաղմուկ սահում է մի ծառից մյուսը, ծառերի արանքից տեսանելիորեն շողշողում է հարթավայրի օդը, ես տեսնում եմ այդ օդը, որն այս պահին անշարժ է, քանի որ արևն անխնա այրում է: Օդափոխիչի աղմուկի միջից հայրս ցածրաձայն ասում է.

— Ամեն ինչ նույնն է, ոչինչ չի փոխվել, բնավ ոչինչ:

Մտքունս հարցնում եմ՝ գուցե հորս հմուտ այգեգործների մի բանակ է պետք, որ գոնե այս ծառերի ճյուղերը շտկի և նրանց վայրի աճին քաղաքակրթություն հաղորդի կամ էլ ժամանակակից տեխնիկայով գյուղաքաղաքի մուտքն ազդարարող բարդիները մեկընդմիջտ կտրի: (Իսկ մենք կնստենք այդ կոճղերից մեկի վրա՝ հայացքներս ուղղած միջօրեի տոթով ներծծված հարթավայրին, հայրս նույնիսկ կոճղին կբարձրանա, տեղում պտույտ կգործի, իսկ հետո դառնացած այն մարդու ձայնով, որն ուշացումով, բայց լավ է ուշ, քան երբեք, իրավունք է ստանում ասելու. «Վերջապես այդ անիծյալ փոշոտ ծառերն անհետացան»):

Ոչ ոք չի էլ պատկերացնում, թե ինչ նշանակություն ունեն այդ ծառերն ինձ համար, ծառերի արանքում խաղացող օդը, որ հնարավոր է պարզ տեսնել: Ծառերը ոչ մի տեղ այդքան խոսուն չեն, օրքան այստեղ՝ այս հարթավայրում, որտեղ նրանք ազատ սփռվել են, ես ուզում եմ կանգ առնել, հենվել ծառերի բներին, հայացքս վեր հառել ու կախարդվել տերևների արագ ու մանրիկ շարժումներով, բայց հայրիկիս չեմ խնդրում կանգ առնել, քանի որ նրա «ինչո՞ւ» հարցին պատասխան չունեմ, դրա համար ստիպված կլինեմ շատ բան պատմել, անկասկած՝ նաև Մատեոյի մասին, բացատրել, թե ինչու եմ ուզում կանգ առնել հենց այստեղ՝ ուղևորության նպատակակետից ոչ շատ հեռու:

Մեր մեքենան, կարծես խորհրդավոր ուժերից առաջ մղվելով, գրեթե անտարբեր ճանապարհի անհարթությունների նկատմամբ, առաջ է ընթանում, և մինչև տեղ հասնելը մենք նորից ենք կրկնում. «Ոչինչ չի փոխվել»: Քաղաքակրթությունը պետք է ևս մեկ անհաջողություն, այլ կերպ ասած՝ լճացում ապրի: Մենք՝ երեխաներս, դեմքներս ձախ կողմից սեղմում ենք մեքենայի ապակուն,



որը զարմանալի սառն է, աչքներիս չհավատալով՝ նայում մարդկանց, որոնք ապրում են աղբի բլրի մեջ:

— Ոչինչ չի փոխվել,— ասում է հայրս:

Ծուռումուռ թիթեղաշեն, պլաստմասսայե խրճիթներ, գզգզված մազերով երեխաներ, որ խաղում են ավտոմեքենաների ջարդոնների ու կենցաղային աղբի արանքում, կարծես դրանից ավելի հաճելի բան չկա: «Ի՞նչ կպատահի այս ջարդոններին,— ուզում եմ հարցնել ես,— ի՞նչ կպատահի, եթե մութն ընկնելիս, երբ գիշերն իր հունի մեջ մտնի, երբ սովերները շարժվեն, երբ բոլոր այս իրերը, որ անմխիթար խառնաշփոթի մեջ թափված են այստեղ, կենդանանան»: Եվ մի պահ մոռանում եմ բարդիները, Մատեոյին, լույսի շողքը, «Շևրոլետը», ու հարթավայրի սև գիշերը պարուրում է ինձ իր միանգամայն կործանարար ուժով, ես չեմ լսում գնչուների երգերը, մորմոքող, զարմանալի երգերը, ես մթության մեջ միայն անվերջանալի սովերներ եմ տեսնում, որոնց չի քշում փողոցային լապտերների լույսը:

Իսկ հայրս աչքերը կկոցում ու պատուհանից դուրս է նայում, օրորում գլուխը, հազում իր չոր հազով և այնքան դանդաղ է վարում, կարծես ուզում է մեքենան մի քանի վայրկյանից կանգնեցնել:

— Ապա նայեք,— ասում է նա՝ ցուցամատով խփելով կողային ապակուն:

Ես հիշում եմ կրակը, որի ծովսը ոլորվելով բարձրանում էր, ես տեսնում եմ ցեխից քարացած դեմքերը, ծակող հայացքները, ցնցոտիները, քրջերը, աղբի բլրի վրա առկայծող լույսը, շարունակում եմ նայել ավելի հեռուն, կարծես պետք է ընկալեմ ամեն ինչ, ընկալեմ մարդկանց այս պատկերները. այդ մարդիկ ներքնակ չունեն, դե իսկ մահճակալի մասին երազել անգամ չեն կարող, այդ պատճառով էլ գիշերը գուցե հողի մեջ են թաղվում, թանձր, սև հարթավայրի մեջ, որն ամռանը լի է արևածաղիկներ-

րով, իսկ ձմռանը ամայանում է այնպես, որ մարդ ինքն իր նկատմամբ խղճահարությամբ է լցվում, և այնտեղ բացի հողից ոչինչ չկա, հող, որին ձմռանը ճնշում է հազարավոր ցենտներ կշռող երկինքը, և որը, երբ երկինքը նրան հանգիստ է թողնում, դառնում է ծով, անդորրավետ ծով:

Ես երբեք չեմ ասել, բայց սիրում եմ այս հարթավայրը, որ բարակում ու դառնում է աննշան մի գիծ, դառնում ոչինչ: Մարդ լրիվ մենակ է այս հարթավայրում, ոչինչ չի կարող վերցնել, կարող է միայն լայն տարածած թևերով պառկել հողի վրա, և դա է միակ պաշտպանությունը, որ հարթավայրը ապահովում է մարդու համար:

Եթե ասեմ, որ սիրում եմ Մատեոյին (նա սիցիլիացի է, ամառային արձակուրդներից մի քանի շաբաթ առաջ հայտնվեց մեր դասարանում, *ciao, sono Matteo de Rosa*<sup>1</sup>, և իսկույն սիրվեց բոլորի կողմից՝ բացի ուսուցչից), այդ դեպքում գուցե շատերն ինձ հասկանան, բայց ինչպե՞ս ասեմ, որ հարթավայր եմ սիրում, բարդիներ, փոշեպատ, անտարբեր, հավարտ ու վեհատեսիլ բարդիներ և ծառերի արանքի օդը: Ամռանը, երբ հարթավայրը մի հարկ բարձրության է հասնում, ամենուրեք, ուր էլ նայես, արևածաղկի, եգիպտացորենի ու հացահատիկի դաշտեր են: Պատմում են, որ մարդիկ շարունակ անհետանում են այս անծայրածիր դաշտերում, ու եթե ուշադիր չլինես, այդ հարթավայրը կճանկի քեզ ու ամբողջությամբ կխժժի: Ասում են, սակայն ես չեմ հավատում, բայց հավատում եմ, որ այս հարթավայրը ծով է իր սեփական օրենքներով:

— Այս խեղճերը, — հառաչում է մայրս:

Մենք կարծես հեռուստացույց ենք դիտում ու փոխանակ ալիքը փոխենք, անցնում ենք նրանց կողքով, շարժվում առաջ մեր հով արկղով, որը մեզ վրա մի կլորիկ գումար է նստել և լայնքով այնպես է տարածվում, կարծես

<sup>1</sup> Ողջույն, ես Մատեո դի Ռոզան եմ (իտալ.):

փողոցը մեզ է պատկանում: Հայրս միացնում է ռադիոն, որպեսզի երաժշտությունը այդ ցածրակարգ դասը վերածի պարային ռիթմի և մի ակնթարթում բուժի իրականության այդ արատը:

*Ինձ մոյր արի, մի՛ հեռացիր, այսփեղ արի, սրտիկս, ու մի համբոնյր փուր ինձ...*

Աղմուկով, որի մասին չարժե նայնիսկ խոսել, անցնում ենք ռելսերի վրայով, ծուռումուռ ու ժանգոտ ցուցանակի կողքով, որի վրա հին ժամանակներից գրված է գյուղաքաղաքի անունը:

— Մենք տեղում ենք,— ասում է իմ քույր Նոմին՝ ցույց տալով գերեզմանոցը, որտեղ աչքի զարնող անարդարություն է տիրում: Ամենուր գերեզմաններ են, որոնց մասին ոչ ոք հոգ չի տանում, մոլախտով ծածկված, հազիվ նշմարելի փայտե խաչեր, տարեթվեր, տառեր, որոնք արդեն գրեթե անհնար է վերծանել:

— Մենք տեղում ենք,— կրկնում է Նոմին:

Նրա աչքերում երևում է վախը, որ վաղը կամ մյուս օրը գերեզմանոց պիտի այցելի, անօգնական կանգնի գերեզմանների կողքին, ամաչի ծնողների արցունքների համար, ինքն էլ ցանկանա լաց լինել՝ պատկերացնելով, որ այնտեղ՝ գետնի տակ, հորական կամ մորական տատի դագաղներն են, որոնց մենք՝ Նոմին ու ես, երբեք չենք տեսել, այնտեղ են նաև պապի ու տատի եղբայրներն ու քույրերը: Նման պահերին ձեռքերը խանգարում են, եղանակը անհարմար է: Եթե լաց լինես, գոնե գիտես, թե ձեռքերն ինչի համար են: Գերեզմանների կողքին թրաշուշաններ են ու քնքուշ վարդեր, գերեզմանների վրա՝ շիրմաքարեր, մահացածների անունները փորագրված են քարերին, որ ընթեռնելի լինեն եկող սերունդների համար, շիրմաքարեր, որ ինձ դուր չեն գալիս, քանի որ ճնշում են հարթավայրի հողը և խանգարում իրենց տակ գտնվող հոգիներին՝ հեռու թռչելու:

Շիրմաքարերի տակ գտնվող մեր ազգականներին միայն ծաղիկներն են պակասում՝ դեղին ու ալ կարմիր վարդերը, թրաշուշանները: Բայց շիրմաքարերով ծածկված գերեզմանները չեն քանդվի, եթե ոչ ոք չայցելի նրանց նույնիսկ Սրբոց հիշատակի օրը:

— Նույնիսկ Սրբոց հիշատակի օրը,— կրկնում է մայրս, երբ նրա զարմուհին զանգում ու ճնշված ձայնով պատմում է, որ իրենից բացի ոչ ոք գերեզմանոց չի գնացել՝ հանգուցյալների համար մում վառելու:

— Գերեզմանները գոնե չեն քանդվում,— ասում է մայրս նման դեպքում և այդ նախադասությամբ արտահայտում իր կյանքի խոր վիշտը, որ չի կարող նույնիսկ հանգուցյալների մասին հոգալ, որովհետև նրանք շատ հեռու են, որ տարին գոնե մեկ անգամ՝ Սրբոց հիշատակի օրը, նրանց վրա ծաղիկներ դնի:

Ու քանի որ մահը հազվադեպ է իր մասին ծանուցում, մենք համարյա միշտ այնտեղ չենք, երբ Վոյվոդինայում մեր ընտանիքից որևէ մեկը մահանում է, իսկ երբ մորաքույր Մանցին կամ հորեղբայր Մորիցը զանգում են (նրանք միակն են, որ հեռախոս ունեն)՝ մեզ ասելու, որ, ցավոք, այդ օրը վատ լուր ունեն, այդ պահին արտասովոր լուրջությամբ է իջնում մեր հյուրասենյակում: Այդ մահվան մասին պատմելու բան, իհարկե, կա. երբ մենք այնտեղ ենք գնում, որտեղ ապրում են մեր բոլոր հարազատները, մենք ուշադիր լսում ենք մահացածների մասին պատմությունները և, անշուշտ, հուզվում, երբ մամիկան, որն իր ձայնով հասնում է ցանկացած մարդու հոգու ամենածածուկ անկյունները, սկսում է երգել: Ներկա չլինելով արարողությանը, երբ մարդիկ երեք օր շարունակ հրաժեշտ են տալիս, մինչև, ինչպես իրենք են ասում, հանգուցյալի մասը հողին կհանձնեն (իսկ մենք միայն հեռախոս ունենք և հեռվից լսվող մի ձայն, որը վկայում է, թե անդառնալի դեպք է կատարվել), ապա վատ լուրը լսելու այդ օրը մենք

շարժվում ենք ոգիների նման, նույնիսկ խուսափում հայացքներով իրար հանդիպելուց:

Հիշում եմ, թե ինչպես հայրիկն անսպասելի պոռթկումով աղբարկղը նետեց դեղին քրիզանթեմները, որ մայրիկը հյուրասենյակի սեղանին էր դրել. 1979 թվականի հոկտեմբերյան մի օր էր, երբ լուր ստացանք, որ հայրիկի սիրելի մեծ մորաքույրը մահացել էր:

— Ոչ մի մեռելի ծաղիկ,— ասաց հայրիկը՝ կարմրած ծոծրակով, ձեռքին հեռակառավարման վահանակը:

Այդ պահից սկսած՝ ես ու Նոմին քրիզանթեմներն արգելված ծաղիկներ ենք անվանում. մենք այլևս իրավունք չունենք դրանք սեղանին դնելու, իսկ երբ մեր հայրենիքում գերեզմանոց ենք այցելում՝ մեր հանգուցյալների շիրիմները ծաղիկներով զարդարելու համար, ապա երբեք քրիզանթեմ չենք տանում, նույնիսկ աշնանը: Ու ես մտածում եմ, որ մենք կրկին ուշացել ենք ու նորից մենակ ենք մեր սգի հետ:

Այն ժամանակ մենք չէինք կռահում, որ մի քանի տարի անց այդ շիրիմքարերը կտապալվեն, գրանիտե սալիկները կփշովեն, ծաղիկները կգլխատվեն, քանի որ պատերազմի ժամանակ բավական չէ միայն ողջերին սպանելը: Եթե կռահեինք, հավանաբար գլուխ կխոնարհեինք մեր հարնազատների շիրիմների առջև և կխնդրեինք, որ մեր ցածրաձայն ու միալար երգը մոգական պաշտպան դառնար հանգուցյալներին նրանց հավերժական հանգստի մեջ, և, ինչպես ասում են, ոչ ոք չխանգարեր նրանց, կխնդրեինք նաև, որ անձրևորդերը, թրթուրները, վեցուտնուկները, հազարոտնուկներն ու ամեն տեսակ բզեզները, անակնկալ կերպով լույսի մեջ հայտնվելով, վայրենաբար չվխտան ու չսողան, որ հետո, երբ այս ամենն անցնի, նորից պաշտպանիչ խավարի մեջ փախչեն:

Մեր նուրբ-նոր «Շերտեր» թեքվում է ձախ՝ դեպի *Հայրուկ Ստանկովա փողոց*, մի նրբագեղ շրջադարձ է կատարում, մինչև հայրս կարգելակի ավտոմեքենան, ու քանի որ փողոցը ասֆալտապատ չէ, չորացած ցեխի վրա բարակ շերտով նստած փոշին մեր «Շերտեր» դարձնում է փոշեպատ, տգեղ արարած: Այստեղ էլ քաղաքակրթությունը դադար է տվել:

— Մենք տեղում ենք,— ասում եմ ես:

Մեր մեքենան կանգնում է մուտքի դիմաց՝ չորացած, ծռմռված փայտե տախտակներից պատրաստված պարսպի առջև, որ երևի երկու մետր բարձրություն, երեք մետր լայնություն ունի և հետաքրքրասեր հայացքների ավելի քան մի խոստումնալից ճեղք է առաջարկում: Հայրս անջատում է շարժիչը, մենք աչք են ճպում փոքրիկ, սպիտակ տանը, որին պատկանում է մուտքը, և լուսավորված է արևի վառ ճառագայթներով. դա մամիկայի տունն է՝ հորս մայրիկի, որը տան նախատիպարն է և իր մեջ է պարփակում նախնաստեղծ խորհրդավոր գաղտնիքները: Մենք մի երկար ակնթարթ մնում ենք նստած, մինչև հայրս կրացի մուտքի դարպասը, և մեր «Շերտեր» դանդաղ կսահի բակ ու կարճ ազդանշան կտա՝ վախեցնելով հավերին ու բաղերին:

— Ձեզ Աստված է բերել,— ասում է մամիկան:

Այդ նախադասությունը նա արտասանում է յուրահատուկ մեղմ ձայնով, չի ժպտում, լաց չի լինում, միայն մեկիկ-մեկիկ շոյում է մեր այտերը՝ չմոռանալով իր երեխային՝ հայրիկին: Մեզ համար Աստծո պարգև է նրա հյուրասենյակը, որը միաժամանակ նրա ննջասենյակն է: Մամիկայի ողորմածությամբ ենք մենք տրաուբիստոդա, տոնիկ, ապա-կոլա և երբեմն էլ շնապս հյուրասիրվում: Հռոմի Հովհաննես Պողոս 2-րդ պապը, ինչպես միշտ, գունավոր լուսանկարից մեզ է ժպտում: Ես երկյուղալի ճշտությամբ հետախուզում եմ սենյակը,

հայացքով որոնում սպասքապահարանը, տան օրհնությունը<sup>1</sup>, կարպետները՝ հոյսով, որ ամեն ինչ առաջվա նման է, քանի որ վերադառնալով իմ վաղ մանկության վայրը՝ չափազանց շատ եմ վախենում փոփոխություններից. բայց ամեն անգամ նույն առարկաները տեսնելն ինձ այդ վախից պաշտպանում է, օգնում, որ ես ինձ օտարի նման չզգամ այս միջավայրում, չմտածեմ, որ այլևս մամիկայի կյանքի մասը չեմ: Պետք է հնարավորինս արագ բակ գնամ՝ իմ անհանգիստ պրպտումները շարունակելու համար. «Արդյոք ամեն ինչ դեռ տեղում է»: Մետաղալարից պատրաստված երկու շտեմարանները, որոնց վրա եգիպտացորեն է դասավորված, իսկ ներսում աներես մկներն են վխտում, կապույտ ջրի պոմպը, որն ինձ համար միշտ կենդանի արարած է (գուցե թզուկ կամ էլ անորոշ մի կենդանի), վարդերն ու գիշերային մանուշակները, որոնք մայրս պաշտում է, և որոնց բույրը գիշերը մարդու խելքահան է անում, սալաքարերը, որոնց վրա ամռանը մեզը գոլորշանում է, և որոնց վրա ցայտում է հավերի արյունը, երբ մամիկան ճարակորեն կտրում է նրանց վիզը, իսկ վզից հենց նոր կտցահարած եգիպտացորենի աղացած հատիկներ են դուրս թռչում: «Ամեն ինչ տեղում է», — մտքումս հարցնում եմ ինքս ինձ: Իսկ ինչն է գալու այդ առաջին պահերին ինձ առանձնահատուկ անհանգստություն պատում, սակայն միայն ես չեմ այդ տհաճ զգացումն ունենում, Նոմին էլ է նույն բանը զգում, բայց այլ կերպ է դրան վերաբերվում. ես հետո, շատ հետո միայն իմացա:

Բակը, ապա հավանոցը, զուգարանը, աղբանոցը, պարտեզը և, իհարկե, ձեղնահարկը ստուգելուց հետո, որը բոլոր գաղտնիքներից ամենագեղեցիկն է թաքցնում

---

<sup>1</sup> Քրիստոնեական ժողովրդական ավանդության մեջ օրհնանք-ասույթների թերթիկ է, որը տունը և տան բնակիչներին Աստծո պաշտպանության տակ է վերցնում:

իր մեջ, ես անմիջապես նորից բարձրանում եմ խարխուլ աստիճաններով՝ հետևելով, որ չտրորեմ սալաքարերի արանքում աճած և միջօրեի լույսի մեջ շողշողացող ծաղիկները: Պետք է հնարավորինս արագ վերադառնամ դարպասի մոտ, սողնակը ցած իջեցնեմ, գլուխս դուրս հանեմ՝ տեսնելու, թե նա դեռ այնտեղ է, գզգզված մազերով խենթը՝ իր աչքերով, որոնք ամեն ինչին հավատում ու ամեն ինչ մոռանում են, որոնք հարցնում են, նախքան բերանը կբացվի. «Ի՞նչ ես ինձ բերել. քաղցրեղեն, սրտիս համար շաքարիկ»: Պետք է տեսնեմ՝ դեռ տեղում է Յուլին, որը մանկամիտ է մնացել: Այդպես են ասում, չնայած նա վաղուց հասուն կուրծք ունի ու ցանցառ մազեր՝ թևատակերին: Յուլին, մի քանի քայլ հեռու, հենված է տան պարսպին կամ էլ նստած է ծալովի աթոռին, ամբողջ օրը ոչինչ չի անում՝ բացի դիտելուց: «Յուլի, այստեղ ես»: Խենթ Յուլին, որից մենք երեխաներս, վախենում ենք, որին անվերջ ծաղրում ենք, որին սիրում ենք, քանի որ հավատում է մեր ամեն խոսքին ու պատմում բաներ, որոնցից հեռավոր ու մութ մի աշխարհի հոտ է գալիս:

— Հեյ, Նոմի և Իլիկո՛ր,— ասում է Յուլին,— դուք քույր ունեք, այո՛, այո՛, քույր, ես գիտեմ՝ նա գեղեցիկ է, այո՛, այո՛, գեղեցիկ,— և քթի տակ ծիծաղում է,— ես գիտեմ, ամա նայեք: Եվ Յուլին ցույց է տալիս իր շրջագգետի մեծ նարնջագույն ծաղիկները, սրանք իմ աչքերն են, այո՛, այո՛....

— Տրաուբի,— միաբերան ասում ենք Նոմին ու ես, երբ ձեռքներս լվացել ու նստել ենք մամիկայի գցած սեղանի շուրջը, որի վրա պլաստմասսայե սկուտեղով շշեր են արդեն դրված,— տրաուբիտո՞ղա:

Այսպես է մեր հայրենիքի կախարդական խմիչքի անունը: Առանց պիտակի բարակ ու երկար շիշ է, որի



կանաչ ապակու վրա սպիտակ տառեր են փայլփլում. մամիկան մեծ քանակությամբ տրաուբի է գնել մեզ համար:

— Միայն ձեզ համար,— ասում է նա:

Եվ, իհարկե, Նոմին ու ես սանձարձակ Արևմուտքի անդաստիարակ երեխաներ ենք, որոնք ծիծաղում են, երբ Արևելքում փորձում են կոկա-կոլային նմանակել և ընդամենը շագանակագույն անհամ արգանակ են ստանում ապա-կոլա անունով (ապա-կոլա. սարսափելի անուն է): Բայց տրաուբին մենք սիրում ենք, այնքան շատ ենք սիրում, որ մտածում ենք՝ մի քանի շիշ մեզ հետ Շվեյցարիա տանել՝ մեր ընկերուհիներին ցույց տալու համար, որ մեզ մոտ՝ մեր հայրենիքում, նման անհավատալի համեղ բան կա, բայց մինչև այսօր էլ նման բան չենք արել:

Մամիկան սեղանին է դնում հավի գուլյաշ՝ նոքեռով<sup>1</sup>, պաքսիմատի փոշու մեջ թաթախված տապակած խոզի միս, տապակած կարտոֆիլ և դոդոն, արևի տակ թթվեցրած վարունգ և լոլիկի ապաթ՝ կարմիր սոխով, մամիկան մեզ թույլ է տալիս խմել ուզած չափով տրաուբի, և մենք նույնիսկ թույլտվություն ենք ստանում ճաշի ընթացքում տեղից վեր կենալու ու մամիկայի փափուկ այտը մի կուշտ համբուրելու: Մենք ձախից և աջից սեղմվում ենք նրա հագուստի ջերմությանը. ես և քույրս միայն մամիկայի խոսքերից չենք բարկանում, երբ ասում է, որ երկուսս էլ երկու մատ բոյովացել ենք:

— Իմ մեծ աղջիկներ,— ասում է նա,— շուտով դուք ջահել կին կդառնաք:

Նոմին ու ես ձեռքներս հերթով դնում ենք մամիկայի հյուսքերին: Այնքան նուրբ ու հաճելի է հյուսած մազերը ձեռքի ափով շոշափելը, իսկ ես այս ամռանն իսկապես զգում եմ, որ ոտքերս ասես երկարել են, ձեռքերս՝ մեծացել, մարմնիս հետ շարունակ ինչ-որ անկանոն բաներ են

<sup>1</sup> Հունգարական խմորից պատրաստված խավարտ, որ մատուցվում է մսով ճաշերի հետ:

կատարվում. հասակս հաստատ ավելի քան երկու մատ ավելացել է, բայց, չնայած դրան, դեռ շատ հեռու եմ չափահասների աշխարհից: Դա հատկապես նկատում եմ, երբ մայրիկն ու հայրիկը սկսում են Շվեյցարիայում մեր կյանքից, մեր ձեռնարկության աշխատանքից պատմել: «Լվացքատուն, արդուկում». գրված է սև-սպիտակ ցուցանակի վրա: Հայրիկը մամիկայի աչքերի առաջ օդում նկարում է տառեր ու թվեր, թե ինչ արժե մեկ վերնաշապիկ, սփռոց, շապիկ արդուկելը, որքան զեղչ է նախատեսվում, երբ միանգամից տասը վերնաշապիկ են բերում, իսկ մայրիկը նկարագրում է, թե ինչպիսի յուրահատուկ գործվածքից են հարուստների հագուստները, պետք է մատներդ սկզբում ընտելանան դրանց, որ հասկանաս, թե արդուկն ինչպես սպիեցնեն այդ գործվածքի վրայով:

— Նման վճարի դիմաց չպետք է ծալքեր երևան,— ասում է նա:

Ես մի ականջով լսում եմ ծնողներին և համարյա անշշուկ զրուցում Նոմիի հետ, թե ինչպես կարճազանքեին մեր ընկերուհիները տրաուբին խմելու դեպքում: Բեռլին, օրինակ, կասի՝ վատը չէ, բայց առանձնահատուկ բան էլ չէ, Կլաուդիան հավանաբար շիշն այս ու այն կողմ կպտտի, հետո էլ ոչինչ չի ասի կամ ուները կթոթվի:

— Իհարկե, հեշտ չէ որևէ բան խոստովանելը,— ասում է Նոմին:

Այո՛, դա ճիշտ է: Մենք մտածում ենք, որ ճիշտ չի լինի, եթե մեր ընկերուհիներին ստիպենք ստել, ավելի լավ է՝ մենք հիանանք տրաուբիով ու սպասենք, որ մի օր այն կդառնա շատ ավելի հայտնի, քան նույնիսկ կոկա-կոլան: Եվ Նոմին նորից է լցնում մեզ համար, հայրիկն ու մայրիկը այդ ընթացքում պատմում են, որ մենք լվացքը նաև առաքում ենք, արդուկված լվացքը մեծ զամբյուղներով հիմնականում երեկոյան ենք տանում մեր հաճա-

խորդների տները, իհարկե, նրանք դրա համար լրացուցիչ պետք է վճարեն:

— Մենք ոլորաններով բարձրանում ենք բլուրներն ի վեր. չէ՞ որ նրանք սիրում են վերևում ապրել, այդ հարուստները, — ասում է հայրիկն ու ծիծաղում, հետո պատմում է շների մասին, որոնք առաքման ժամանակ հարձակվել են իր վրա կամ փորձել են հարձակվել, իսկ ես հիշում եմ մեր նկուղը, որտեղ երկու վլացքի մեքենա է դրված, փափկեցնող փոշի, վլացքի միջոցներ ու հատուկ օճառներ, պլաստմասսայե անհամար զամբյուղներ, տարբեր մեծության ու գույների կտորից պարկեր՝ վլացքի սեղմակներով, ինչպես նաև սպասքապահարան՝ սպասքով, համեմունքներով, և սալօջախ. հիշում եմ, թե ինչպես էինք նստում փայտե փոքրիկ մեղանի շուրջը, որը հայրիկը գտել էր փողոցում: Հիշում եմ, որ մշտապես ցուրտ նկուղում, որտեղ թաղմ վլացք էր կախված, մենք միշտ լուռ էինք ճաշում. հայրիկը չի սիրում, երբ մենք ուտելիս խոսում ենք: Նոմին և ես, երբ մեզ չեն խանգարում, մատներով չափում ենք տձև վարտիքները, պատկերացնում, թե քանի հատ մեր ազդրերից ու հետույքներից կտեղավորվեն այնտեղ՝ այդ օդապարիկների մեջ:

— Հարուստներն էլ են զուգարան գնում, իսկ նրանցից ոմանք նույնիսկ ահագին ճարպակալված են, — ասում ենք մենք՝ կամացուկ ծիծաղելով: Բայց ես ամաչում եմ, երբ այդ մարդն իր վլացքի փաթեթը տանում է, ու ես վճարը գանձելիս ստիպված եմ այդ մարդու աչքերի մեջ նայել. ոչ ոք այդ մասին չգիտի, նույնիսկ Նոմին:

— Դա ծանր աշխատանք է, — ասում է մամիկան՝ կտրելով հացի մի մատնաչափ հաստության կտոր ու մեկնելով հայրիկին:

— Բայց մենք գումար ենք վաստակում, և ոչ ոք ինձ չի պարսավում, — պատասխանում է հայրիկը հակաճառելով, նորից լցնում բաժակը և ասում, — դե, պատմեք, մամիկա,

միթե դեռ ստիպված եք հացի այս խղճով կտորի համար գիշերվա կեսին հերթ կանգնել, այն էլ հիմա, երբ բոլոր պարտիզանների թագավորը վերջապես մեռել է, թե՛ կարող եք հաց գնել հետմիջօրեին կամ էլ օրվա այլ ժամերին:

Եվ հայրիկն անմիջապես սկսում է խոսել Արևելքի ու Արևմուտքի միջև հիմնական տարբերություններից, սկզբունքային առանձնահատկություններից, որ տիեզերքում ընդհանրապես գոյություն ունեն՝ այդ ընթացքում հորեղբայր Մորիցի քաշած տանձի շնապսի մի քաժակը մյուսի հետևից կոնծելով: Այս տարի, երբ ընկեր Իոսիպ Բրոզ Տիտոն մահացել է, և ապացուցված է այն, ինչը բոլորը (գոնե մտավորականները) արդեն վաղուց գիտեին, որ դեռ բազում սերունդների աշխատանք կպահանջվի, մինչև սոցիալիստական աղբ-տկտեսությունը ուշքի կգա, եթե իհարկե, ուշքի գա: Այս ամենը և նման շատ այլ բաներ մենք իմանում ենք մեր ճամփորդության ընթացքում: Երբ հայրիկն արդեն լրիվ իր սովորական հունի մեջ է մտել, Նոմին, բոլորովին անսպասելի, իր համառ, ծղրտան ձայնով, որով սովորաբար քաղցրավենիք է խնդրում, ասում է.

— Ես ուզում եմ, որ մամիկան այժմ ինձ հետ խոսի, ուզում եմ, որ մամիկան պատմի:

Եվ նա հարցնում է տատիկին, թե քանի խոճկոր ունեն խոզերը, հարցնում է սագերի, հավերի մասին, թե արդյոք կարող ենք հետո հավաքնից ձու վերցնել, ուզում է իմանալ՝ մամիկան դեռ առաջվա նման բադերի կտուցը կեր խցկո՞ւմ է, արդյոք Յուլին շարունակո՞ւմ է նրա համար գնումներ կատարել շուկայում, և պարոն Սալմայի այգին ի՞նչ տեսք ունի: Եվ Նոմին կախվում է մամիկայի վզից, խոսում ու խոսում է անդադար, մայրիկը նրա՝ տոթից կարմրած դեմքը շոյում է ու ասում.

— Մենք նոր ենք եկել, դու դեռ մի քանի օր ունես մամիկային հարցախեղդ անելու համար:

— Բայց ես հիմա՛ եմ ուզում ամեն ինչ իմանալ,—  
ասում է Նոմին,— ուզում եմ ամեն ինչ մանրամասն իմա-  
նալ,— կրկնում է նա ու սեղմվելով մամիկայի այտին՝ հա-  
մարյա լաց է լինում, ճշում:

Մայրիկը չհասկանալով օրորում է գլուխը, իսկ հայ-  
րիկն ասում է.

— Այսպիսի ճանապարհից հետո ես այդ մանկական  
թոթովանքները լսելու ցանկություն չունեմ,— և ձեռքով  
հարվածում է սեղանին, ու քանի որ այնտեղ ճանճ չկա,  
մենք բոլորս կուչ ենք գալիս, բացի տատիկից, որը հան-  
դարտ ձայնով ասում է.

— Բարի գալուստ իմ տուն: Բարի գալուստ ամենե-  
ցուն, իմ սիրելի Միկոյ՛, հիմա ես Նոմիի և Իլդիկոյի հետ  
փոքրիկ շրջագայություն կկատարեմ, իսկ դու այս ըն-  
թացքում հանգստացի՛ր, հետո աղամուկեր կուտենք:

Իմ տատիկի միատուն ու մեղմահնչյուն երգը, գոր-  
տերի գիշերային կոկոռը, լմոզերի կկոցած աչքերը, հա-  
վերի անհանգիստ կչկչոցը մինչև մորթվելը, գիշերային  
մանուշակներն ու ծիրանագույն վարդերը, կոպիտ հայ-  
հոյանքները, ամառվա կիզիչ արևը և, դրան ավելացրած,  
սոխառածի հոտը, իմ խիստ հորեղբայր Մորիցը, որ հան-  
կարծ տեղից վեր է կենում ու սկսում պարել. սրանք են իմ  
մանկության պատկերները:

Տարիներ անց երկար մտորելուց հետո ես այսպես  
պատասխանեցի իմ ընկերոջ հարցին, թե ինչ է ինձ հա-  
մար հայրենի տունը, բայց այդ պահին շոշափելի առար-  
կաները բնավ չմտաբերեցի: Առաջինը՝ համեմատաբար  
անհայտ, բայց իրականում աշխարհի ամենալավ խմիչքը՝  
տրաուրիստոֆանոնով, որ անկասկած նաև Հռոմի պապ  
Հովհաննես Պողոս 2-րդը օրհնել է, այնքան է կապված  
իմ հայրենիքին, որ բոլորովին մոռացա հիշատակել այն:  
Եվ երկրորդը՝ մի բան, որին այնքան էլ հեշտ չէ անուն

տալը, հիշողությունն է Նոմիի մասին, թե նա ինչպես էր իր նվնվոցով հայրիկին ու մայրիկին նյարդայնացնում, այն ժամանակ՝ ամռանը՝ 1980 թվականին, երբ տեղ հասնելուց քիչ անց ուզում էր ամեն ինչի մասին տեղեկանալ մամիկայից, ամեն ինչ ու հենց այդ պահին: Ես հանկարծ հասկացա, որ քրոջս նվնվոցները կարելի էր համեմատել իմ թաքուն ու հապճեպ ստուգումների հետ, քանի որ երկուսս էլ վախենում էինք, որ արդեն անմասն էինք դառնում մեր հայրենի տնից, դրա համար ուզում էինք հետ բերել բաց թողած ժամանակը, երբ այստեղ չէինք և այդ մրցությունում անասելի թեթևացած էինք զգում մեզ, երբ կարողանում էինք կառչել ամենապարզունակ ու անիմաստ առօրյա բաներից, օրինակ՝ կոճոր, բարեբախտաբար, դեռ իր տեղում էր՝ խոզանոցում՝ արտաքնոցի մոտերքում, մամիկան այդ ընթացքում կով կամ էլ փասիան չի գնել, այլ նախկինի նման բավարարվում է խոզերով, հավերով, սագերով և բաղերով, փոքրիկ աղավնատնով, որը, առաջվա պես անփոփոխ, ձեղնահարկի վրա է: Մամիկան պատմում է, որ նա աղավնիներին միայն հանուն մեր մայրիկի է պահում, որովհետև մայրիկը տատիկի՝ աղավնիով արգանակը շատ է սիրում և ամեն տարի երեխայի նման, ինչպես ինքն է ասում, ուրախանում է դրանով: Մենք անկեղծորեն ուրախանում ենք մամիկայի հետ կատարած մեր շրջագայության ժամանակ՝ տեսնելով, որ նա իր բանջարանոցը չի վերածել ծաղկանոցի, սալորենիի իր տեղում է՝ եգիպտացորենի ամբարի կողքին, որտեղ եղել էր տարիներ շարունակ: Սովորաբար սալորենիի մի մասն ընկնում է այգու մեջ, իսկ մյուս մասը՝ սալաքարերին, որտեղ դրանք կարճ ժամանակ անց կեր են դառնում մրջյուններին, բզեզներին, պիծակներին և շարունակ հիմարաբար շուրջբոլորը կտցող հավերին: Մամիկան, մեզ ցույց տալով իր աշխարհը, կանգ է առնում հավանոցին կից փայտե ցանկապատի մոտ և ասում.

— Այո՛, պարոն Սալմայի բակը նախկինի պես անխնամ է, ինքներդ նայեք:

Երբ մենք ցանկապատի մի մատնաչափ ճեղքից նայում ենք, տեսնում ենք դդումի խոշոր գլուխները, որոնք տեղ–տեղ պայթել են արդեն, մոլախոտը, որը խեղդել է չքնաղ վարդերին, և լսում ենք մամիկային, որն ասում է, թե չի կարողանում հասկանալ այդ հարգարժան պարոն Սալմային, որ ամեն տարի իր տունը թարմ ներկով սպիտակեցնում է, բայց այգին թողնում է անխնամ:

— Ապա նայեք, թե ինչպես է բաղեղը խփել հատապտուղների թմբերը:

Այս ամենը տեսնելով՝ Նոմին ու ես հանգստանում ենք, որովհետև մեր տունը իրավունք չունի փոխվելու, իսկ եթե փոխվի, ապա աննշան: Տասնութ տարեկանում, երբ մենք արդեն չափահաս դառնանք, կվերադառնանք, կսողոսկենք մամիկայի տաքուկ, իսկ վերմակի տակ և երազում կտեսնենք, որ ընդամենը մի քանի տարով ենք հեռացել, Շվեյցարիա գնացել:

Այո՛, մենք վերջապես տեղում ենք, մեր շրջագայությունից հետո նկատում ենք, որ իսկապես տեղ ենք հասել, և այժմ այնտեղ ենք, որտեղ մեր տատիկն իր կյանքն է անցկացնում. մամիկան, իմիջիայլոց, երկու անգամ Զատիկին, մեկ անգամ էլ Ծննդյան տոներին մեզ մոտ՝ Շվեյցարիա է եկել, իսկ առհասարակ արտասահմանում ընդամենը մեկ անգամ է եղել. Հռոմ է գնացել՝ Հռոմի պապի ձեռքը համբուրելու: Մամիկան բերանի անկյունով ծիծաղում է, երբ պատմում է իր սիրելի Հռոմի պապին տեսնելու համար ավտոբուսով կատարած դժվարին ճամփորդության մասին: Հռոմը նրան այնքան մեծ, անծայրածիր է թվացել, որ այնտեղ գտնվելիս շարունակ ամուր կառչել է իր ձեռնափայտից կամ էլ ընկերուհուց:

Կարդացե՛ք գիրքն ամբողջությամբ՝ ձեռք բերելով «Զանգակ» գրատնից և Հայաստանի այլ գրախանութներից, ինչպես նաև առցանց՝ [www.zangak.am](http://www.zangak.am) կայքէջից:

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, 2016

ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով՝ առանց հրատարակչի գրավոր համաձայնության: